

III. ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
		Քննույթ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս			
					Ընդամենը	Այդ թվում		3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս. 14 շաբ.	6-րդ կիս. 15 շաբ.	7-րդ կիս. 2աբ.	8-րդ կիս. 2աբ.		
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		5, 6տ		72	54	18			36	36				
1.2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		6տ		18	14	4				18				
1.3	Իրավունքի հիմունքներ		6տ		36	26	6	4			36				
1.4	Պատմություն		5տ		36	28	8			36					
1.5	Օտար լեու		5տ		60	42	18			60					
1.6	Ֆիզիկական կուլտուրա		5 տ		58		58			28	30				
	ԸՆԴԱՄԵՆԸ				280	164	100	16		160	120				
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		5տ		36	30		6		36					
2.2	Քաղաքագիտական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		5տ		18	18				18					
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	48		6		54					
3.	ԱՌԱՆՁՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
3.1	Հաղորդակցություն		5տ		36	10		26		36					
3.2	Համակարգչային օրերատորության հիմունքներ		5տ		72	20	52			72					
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	30	52	26		108					
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ														
4.1	Հաշվապահական հաշվառման ներածություն		5տ		18	10		8		18					
4.2	Տնտեսագիտության տեսության հիմունքներ		5տ		36	18		18		36					
4.2	Ֆինանսների հիմունքներ		6տ		36	18		18				36			
4.3	Հարկային օրենսդրության հիմունքներ		6տ		36	18	10	8				36			
	ԸՆԴԱՄԵՆԸ				126	64	10	52		54	72				
5.	ՀԱՏՈՒԿ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ														
5.1	Հաշվապահական հաշվառման հիմունքներ		5տ		72	30	42			72					
5.2	Փաստաթղթավորում և հաշվապահական հաշվառման ձևեր		6տ		36	16	20					36			
5.3	Տեղեկատվական տեխնոլոգիաները հաշվապահական հաշվառման մեջ		6տ		72	20	52			30	42				
5.4	Հիմնական միջոցների հաշվառում		6 տ		36	18	18					36			
5.5	Պաշարների հաշվառում		6տ		36	16	20					36			
5.6	Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառում		6տ		72	36	36					72			
5.7	Դրամական միջոցների հաշվառում		6տ		36	18	18					36			
5.8	Սեփական կապիտալ: Եկամուտների և ծախսերի հաշվառում		6տ		36	18	18					36			
5.9	Կառավարչական հաշվառման հիմունքներ		6տ		18	6	12					18			
	ԸՆԴԱՄԵՆԸ				414	178	236			102	312				
6.	ԸՆՏՐՈՎԻ														
6.1			6տ		36							36			
	ԸՆԴԱՄԵՆԸ				36							36			
	ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				26						26				
	ԸՆԴԱՄԵՆԸ				1044	484	398	100		504	540				
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ				100										
	Շաբաթվա ժամերի քանակը									36	36				

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԾԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Բարոյագիտություն և գեղագիտության հիմունքներ				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2	Հաշվապահի էթիկայի կանոններ			1	Անհատական համակարգիչների,
3				2	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
4				3	Օտար լեզվի
				4	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների,
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	Հաշվապահական փաստաթղթերի և հաշվային ռեգիստրների:
1	Ուսումնական	5	4		
2	Մասնագիտական	6	2		
3	Նախաավարտական	6	2		
	ԸՆԴԱՄԵՆԸ		8		
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈԹՅ ԱՏԵՍԱԿՈՐՈՒՄ					
1. Բանավոր համակցված քննություն « Հաշվապահական հաշվառման հիմունքներ», « Հիմնական միջոցների հաշվառում», «Պաշարների հաշվառում», «Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառում» «Պրամական միջոցների հաշվառում», « Սեփական կապիտալ: Եկամուտների և ծախսերի հաշվառում», « Կառավարչական հաշվառման հիմունքներ» մոդուլներից Ամփոփիչ պետական ատեստավորում հունիսի 22-ից մինչև 5-ը հուլիսի					
				1	Մարզադահլիճ
				2	Մարզահրապարակ
VII. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ					
1 Քիմիայի					
2 Ֆիզիկայի					
ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐ					
ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԽԻ					

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է ուսումնարանի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
- Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է ուսումնարանը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է ուսումնարանի ուսումնամեթոդական խորհուրդը:
- Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը՝ կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
- Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
- Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
- Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
- Պահուստային ժամերը տնօրինում է ուսումնարանը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
- Ուսումնական պրակտիկական կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը՝ կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
- Նախաավարտական պրակտիկական անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
- Ուսումնարանը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ)

ԿՐԹՈՒԹՅԱՆ 0601 <<ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՀԱՇՎԵՏԱՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ և ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՐՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը ԱՀՀ- 4-09-001

Մոդուլի տևողությունը 36 ժամ

-տեսական պարապմունք 10 ժամ

-գործնական պարապմունք 26 ժամ

Մոդուլի նպատակը Սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

Արդյունքները

1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին
3. Նախածեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ
4. Մեկնաբանել, աղյուսակներ, ամփոփաթերթեր, հաշվարկներ, հաշվետվություններ
5. Մեկնաբանել, աղյուսակներ, ամփոփաթերթեր, հաշվարկներ, հաշվետվություններ

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1 Սահմանել ուսումնառության անձնական նպատակները

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,

բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,

գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ ուսումնառության խնդիրների, նպատակների, մեթոդների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրվող հարցերի 70 %-ը տրամաբանորեն պատասխանվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ՝ օգտագործելով մասնագիտությանը վերաբերող նյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 4 ժամ:

Արդյունք 2 .Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին

Կատարման չափանիշներ

ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,

բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,

գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային,

դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի և առանձին թեմաների շուրջ հանձնարարված շարադրությունների միջոցով, որն իր մեջ կարող է ներառել հարցադրումներ ուսումնառության խնդիրների, նպատակների, մեթոդների, քաղաքական կամ տնտեսական կյանքին վերաբերող թեմաների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրվող

հարցերի 70 %-ը տրամաբանորեն պատասխանվի ճիշտ կամ տրված թեմայի շուրջ շարադրանքը լինի տրամաբանական, գրված լինի ճիշտ հայերենով:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ՝ օգտագործելով մամուլի նյութերը, մասնավորապես լսարանին հետաքրքրող մշակույթի, գիտության առանձին բնագավառներին վերաբերող հոդվածները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 6 ժամ

Արդյունք 3 Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը),

բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,

գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,

դ. կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում/:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ լսարանում քննարկված կամ վիճաբանվող թեմաների շուրջ: Դա կարող է լինել մամուլում տպագրված տնտեսագիտական թեմաների քննարկման միջոցով, փոքր և միջին բիզնեսի ամրապնդման հարցերի շուրջ բանավեճ կազմակերպելու, տնտեսական ձգնաժամի էության, դրա դրսևորումների և այլ կենցաղային, տնտեսագիտական կամ մշակույթի ոլորտի տարբեր հարցերի շուրջ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ազատ կերպով ձևակերպի իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, ցուցաբերի դրանք պաշտպանելու կարողություն:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ, սեմինար ու գործնական պարապմունքներ՝ դասախոսի կողմից ընտրած թեմաների շուրջ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 10 ժամ:

Արդյունք 4. Մեկնաբանել, աղյուսակներ, ամփոփաթերթեր, հաշվարկներ, հաշվետվություններ

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է նախանշում աղյուսակների, ամփոփաթերթերի, հաշվարկների, քարտերի և նրանց միջև եղած տարբերությունները,

բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված աղյուսակները, ամփոփաթերթերը, հաշվարկները.

գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ լսարանում քննարկված տեղեկատվական աղյուսակների, ամփոփաթերթերի, հաշվարկների/ օրինակ ,աշխատավարձի հաշվարկ, շահույթի հաշվարկ/, հաշվետվությունների վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե կարողանում է ըստ նշանակության տարբերել սկզբնական փաստաթղթերը, հաշվարկային և բացատրական աղյուսակները ,հաշվետվությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ, սեմինար ու գործնական պարապմունքներ՝ դասախոսի կողմից ընտրած թեմաների շուրջ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 8 ժամ:

Արդյունք 5. Կատարել փաստաթղթավորում

Կատարման չափանիշներ

ա. ճիշտ է տարբերակում փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,

բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,

գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ու պատասխանի կամ գործնական աշխատանքի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ առանձին փաստաթղթերի շուրջ կամ տրված տեղեկատվության հիման վրա լրացնում է պահանջվող փաստաթուղթը՝ նշելով օգտագործման տեղը և նպատակը: Օրինակ, դրամարկի մուտքի կամ ելքի օրդեր, հաշիվ ասպրանքագիր, արձակուրդի հրաման և այլն:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե հիմնականում գիտի փաստաթղթավորման նշանակությունը, կատարում է փաստաթղթերի դասակարգում ըստ նշանակության և օգտագործման տեղի, գիտի պահանջվող թեկվիզիտները և դրանց նշանակությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական պարապմունքներ՝ դասախոսի կողմից ընտրած թեմաների շուրջ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 8 ժամ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕԴԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը ՀՕՀ 4-09-002

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

-տեսական պարապմունք 20 ժամ

-գործնական պարապմունք 52 ժամ

Մոդուլի նպատակը Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

Մուտքային պահանջներ Այս մոդուլը ուսուցնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում

Արդյունքները

1. WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ)
2. Տեքստերի տարրական ֆորմատավորում
3. Փաստաթղթի պահպանում
4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում
5. Փաստաթղթի տպագրում
6. Ինտերնետում աշխատելու իմացություն

Գնահատման կարգ մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ)

Կատարման չափանիշներ

ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը

բ. բացել նոր փաստաթուղթ

գ. ստեղծաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,

դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ

ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում

զ. փակել փաստաթուղթը

է. բացել առկա փաստաթուղթը

ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա, մասնավորապես պետք է կարողանա բացել ծրագիրը, ստեղծաշարի օգնությամբ մուտքագրել առաջադրված տեքստը, կատարել ուղղումներ տեքստի մեջ, փակել փաստաթուղթը և պահել բացված թղթապանակի մեջ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե կարողանում է հիմնականում կատարել տրված առաջադրանքը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Մեթոդաբանությունը և ռեսուրսները՝ դասախոսություններ, գործնական պարապմունքներ համակարգչային սրահում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 2. Տեքստերի տարրական ֆորմատավորում

Կատարման չափանիշներ

ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար

բ. նշել բառերը և տեքստային հատվածները

գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝

դ. կատարել տողերի հավասարեցում

ե. փոխել միջտողային տարածությունները

զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով

- է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով
- ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից
- թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները
- ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները
- ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը
- ժբ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ
- ժգ. պատճենել տեքստը
- ժդ. տեղափոխել տեքստը
- ժե. տողադարձել տեքստը
- ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա, մասնվորապես պետք է կատարի մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում, տողերի հավասարեցում, փոխի միջտողային տարածությունները, փոխի տեքստի գունային ֆոնը, փոխի պարբերության խորությունները լուսանցքներից, չեղյալ հայտարարի կամ վերականգնի ֆորմատավորված տեքստը, կարողանա պատճենել, տեղափոխել, տողադարձել տեքստը և համարակալել էջերը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը կարողանա կատարել նվաճ հիմնական գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ, գործնական պարապմունքներ համակարգչային սրահում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 16 ժամ

Արդյունք 3. Փաստաթղթի պահպանում

Կատարման չափանիշներ

- ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,
- բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,
- գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա, մասնվորապես պետք է իմանա փաստաթղթերի պահպանման ձևը, պահպանի նոր ստեղծված փաստաթուղթը, փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը կարողանա կատարել նշված հիմնական գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ, գործնական պարապմունքներ համակարգչային սրահում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 10 ժամ

Արդյունք 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

Կատարման չափանիշներ

- ա. պատրաստել աղյուսակ,
- բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
- գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,
- դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ,
- ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները,
- զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,
- է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ,
- ը. փոխել աղյուսակի գծերի գույնը,
- թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա, մասնվորապես պետք է կարողանա պատրաստել աղյուսակ, մեջը մուտքագրել տեքստ, կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, ավելացնի նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, փոխի սյունակի լայնությունը, տողի բարձրությունը, գույները և այլն:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը կարողանա կատարել նշված հիմնական գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ, գործնական պարապմունքներ համակարգչային սրահում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 12 ժամ

Արդյունք 5. Փաստաթղթի տպագրում

Կատարման չափանիշներ

- ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,
- բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,
- գ. տպագրել փաստաթուղթը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա, մասնվորապես պետք է իմանա փաստաթղթերի պահպանման ձևը, պահպանի նոր ստեղծված փաստաթուղթը, փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը կարողանա կատարել նշված հիմնական գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ, գործնական պարապմունքներ համակարգչային սրահում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 10 ժամ

Արդյունք 6. Ինտերնետում աշխատելու իմացություն

Կատարման չափանիշներ

- ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,
- բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,
- գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը,
- դ. իմանալ History հրամանի նշանակությունը,
- ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,
- զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,
- է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,
- ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,
- թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,
- ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,
- ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,
- ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,
- ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի հիման վրա, մասնվորապես պետք է իմանանա Ինտերնետ հասկացության նշանակությունը, իմանա Ինտերնետային Հասցե հասկացությունը, կարողանա պատճենի ինֆորմացիան ինտերնետային էջից, բացի այդ գիտի օգտվել տեղեկատվության որոնման ինտերնետային ծառայություններից, գիտի էլեկտրոնային փոստի նշանակությունը, կարող է ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը կարողանա կատարել նշված հիմնական գործողությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

դասախոսություններ, գործնական պարապմունքներ համակարգչային սրահում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 12 ժամ

ՍՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՇՎԱԳՎԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ»

Սողուլի դասիչը	ՄՆ 4-09-003
Սողուլի տևողությունը	18 ժամ
-տեսական պարապմունք	10 ժամ
-գործնական պարապմունք	8 ժամ

Սողուլի նպատակը Սովորողին տրամադրել հաշվապահական հաշվառման վարման առաջնային գիտելիքներ: Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա հաշվապահական հաշվառումը ընկալել որպես տեղեկատվական և որոշումների կայացմանը աջակցող համակարգ, ըմբռնել հաշվապահական հաշվառման կազմակերպման ու վարման սկզբունքները ըստ

«Հավապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, կարողանա տալ հաշվապահական հաշվառման տեսակների և դրանցից յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների պարզաբանումը:

Մուտքային պահանջները Մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:

Արդյունքները

1. Իմանալ հաշվապահական հաշվառման զարգացման պատմությունը: Հաշվապահական հաշվառումը ընկալել որպես տեղեկատվական և որոշումների կայացմանը աջակցող համակարգ:
2. Դրսևորել անհրաժեշտ իմացություն ՀՀ հաշվապահական հաշվառման օրենքի հիմնական հոդվածների վերաբերյալ
3. Տիրապետել հաշվապահական հաշվառման տեսակներին և դրանցից յուրաքանչյուրի առջև դրված խնդիրներին:

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1 Իմանալ հաշվապահական հաշվառման զարգացման պատմությունը: Հաշվապահական հաշվառումը ընկալել որպես տեղեկատվական և որոշումների կայացմանը աջակցող համակարգ:

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է բնութագրում հաշվապահական համառման խնդիրներն ու նպատակը,

բ. Ճիշտ է բնորոշում հաշվապահական հաշվառման տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգը,

գ. Ճիշտ է բնութագրում հաշվապահական հաշվառման տեղեկատվության ներքին և արտաքին օգտագործողներին:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ հաշվապահական հաշվառման պարմության, զարգացման փուլերի, խնդիրների, նպատակի, տեղեկատվության հավաքման մեթոդների, գրանցման և ընդհանրացման ձևերի և այդ տեղեկատվությունը օգտագործողների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրվող թեստի 70 %-ը պատասխանվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ` օգտագործելով «Հաշվապահական հաշվառման ներածություն» ուսումնական ձեռնարկի նյութերը

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 4 ժամ:

Արդյունք 2 Դրսևորել անհրաժեշտ իմացություն ՀՀ հաշվապահական հաշվառման օրենքի հիմնական հոդվածների վերաբերյալ

Կատարման չափանիշներ

ա. Ճիշտ է սահմանում օրենքի գործողության ոլորտը.

բ. Ճիշտ է ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական հաշվետվությունների տարրերի ճանաչման և չափման մոտեցումները.

գ. Ճիշտ է ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները և ներկայացման կարգը,

դ. Տեղեկացված է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի խախտելու համար նախատեսված պատասխանատվությանը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ հաշվապահական հաշվառման մասին օրենքի գործողության ոլորտի, հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնների, ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքների և ներկայացման կարգի, հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի, գլխավոր հաշվապահի, հաշվապահի, հաշվետարի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրվող թեստի 70 %-ը պատասխանի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ` օգտագործելով «Հաշվապահական հաշվառման ներածություն» ուսումնական ձեռնարկի նյութերը և «Հաշվապահական հաշվառման մասին օրենքի» հոդվածները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 6 ժամ

Արդյունք 3 Տիրապետել հաշվապահական հաշվառման տեսակներին և դրանցից յուրաքանչյուրի առջև դրված խնդիրներին:

Կատարման չափանիշներ

ա. տարբերակում է ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառման խնդիրները և նպատակները,

բ. ճիշտ է ընկալում ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառման փոխկապակցումը հաշվապահական հաշվառման միասնական տեղեկատվական համակարգում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ հաշվապահական հաշվառման տեսակների, մասնավորապես ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառման մասին, դրանց առջև դրված խնդիրների, նմանությունների և տարբերությունների մասին, տեղեկատվության արտաքին և ներքին օգտագործողների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրվող թեստի 70 %-ը պատասխանի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ, սեմինար և գործնական պարապմունքներ՝ օգտագործելով «Հաշվապահական հաշվառման ներածություն» ուսումնական ձեռնարկի նյութերը, «Հաշվապահական հաշվառման մասին օրենքի» հոդվածները, ինչպես նաև դասավանդողի կողմից կազմած օրինակները, որոնք ուսանողին հնարավորություն կտան տարբերել կառավարչական, ֆինանսական և հարկային հաշվառման տարանջատման նպատակը և տեղեկատվության ներկայացման տարբերությունները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 8 ժամ:

ՍՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐ»

Սողուլի դասիչը <<<4-09-004

Սողուլի տևողությունը 72 ժամ

-տեսական պարապմունք 30 ժամ

-գործնական պարապմունք 42 ժամ

Սողուլի նպատակը Սովորողը պետք է տիրապետի հաշվապահական հաշվառման վարման, անալիտիկ և սինթետիկ հաշվառման ռեգիստրների, շրջանառության տեղեկագրերի, դրանց հիման վրա կազմվող ֆինանսական և կառավարչական հաշվետվությունների լրացման և ստուգման հմտություններին:

Սուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «ՄՆ-4-09-001» մոդուլը:

Արդյունքները

1. Հաշվապահական հաշվեկշռի ներկայացում:
2. Հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման մեկնաբանում:
3. Հաշվապահական հաշիվների հաշվային պլան:
4. Հաշվապահական փաստաթղթերի և գրանցամատյանների ներկայացումը:
5. Անալիտիկ և սինթետիկ հաշվառման հիմնավորումը, հաշվետվությունների կազմումը:
6. Ակտիվների և պարտավորությունների գույքագրման անհրաժեշտության հիմնավորումը:

Գնահատման կարգ Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Հաշվապահական հաշվեկշռի ներկայացում

Կատարման չափանիշներ

ա.Ճիշտ է բնութագրում կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու սեփական կապիտալը,

բ. ուսանողը կարողանում է ներկայացնել հաշվապահական հաշվեկշռի բաժինները,

գ. մեկնաբանում է տնտեսական գործառնությունների հետևանքով հաշվապահական հաշվեկշռում տեղի ունեցող փոփոխությունները,

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա՝ մասնավորապես տրված ակտիվների(տնտեսական միջոցների առանձին խմբերի) և պասիվների/սեփական կապիտալի առանձին տարրերի և պարտավորությունների/ խմբավորման միջոցով ուսանողը պետք է կազմի հաշվապահական հաշվեկշիռ: Կազմած հաշվեկշռի վրա ներկայացնում է հաշվեկշռային փոփոխությունների տեսակները և բնութագրում յուրաքանչյուր գործառնության հետևանքով առաջացած փոփոխության տեսակը: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքի 60 -70%-ը կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ ակտիվների և պասիվների դասակարգման և հաշվեկշռում արտացոլման վերաբերյալ: Օգտագործել «Հաշվապահական հաշվառման հիունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 2. Հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման մեկնաբանումը:

Կատարման չափանիշներ

ա. մեկնաբանում է կրկնակի գրանցման կարևորագույն գործառնությունները՝ ստուգողական և ճանաչողական նշանակությունը,
բ. ճիշտ է տարբերակում ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային հաշիվները,
գ. ձևակերպում է պարզագույն տնտեսական գործառնությունների հաշվային թղթակցություններ,
դ. կատարում է կրկնակի գրանցում հաշվապահական հաշիվներում,
ե. ճիշտ է որոշում հաշվապահական հաշիվների մնացորդները և հաշիվներով կազմում շրջանառության տեղեկագիր:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որն իր մեջ ներառում է գործառնությունների ձևակերպում, հաշվապահական թղթակցությունների կազմում, կրկնակի գրանցման եղանակով հաշիվներում գրանցումների արտացոլում և հաշվի վերջնական մնացորդի որոշում:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքի ոչ պակաս քան 70 %-ը կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ օգտագործելով «Հաշվապահական հաշվառման հիունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 3. Հաշվապահական հաշիվների հաշվային պլան:

Կատարման չափանիշներ

ա. բնութագրում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանը,
բ. տարբերակում է հաշվապահական հաշիվները ըստ տնտեսական բովանդակության, դասերի, խմբերի, առաջին և երկրորդ կարգերի,
գ. օգտվելով հաշվային պլանից, ձևակերպում է տնտեսական գործառնությունների հաշվապահական թղթակցություններ,
դ. հասկանում է արտահաշվեկշռային հաշիվների դերը հաշվապահական հաշվառման համակարգում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որն իր մեջ ներառում է գործառնությունների ձևակերպում և հաշվային պլանի կիրառմամբ հաշվապահական թղթակցությունների կազմում: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրված գործառնությունների ոչ պակաս քան 70 %-ը ձևակերպվի ճիշտ, աշխատանքի կատարման ժամանակ կարողանա հեշտությամբ օգտվել հաշվային պլանի դասերից, խմբերից, անհրաժեշտության դեպքում օգտագործի արտահաշվեկշռային հաշիվները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ հաշվապահական հաշվառման գործնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 4. Հաշվապահական փաստաթղթերի և գրանցամատյանների ներկայացումը:

Կատարման չափանիշներ

ա. բնութագրում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը,
բ. ներկայացնում է սկզբնական փաստաթղթերի պարտադիր վավերապայմանները, փաստաթղթերի ժամանակին և ամբողջական ձևակերպումը, հայտնաբերված սխալների ուղղման կարգը,
գ. ներկայացնել հաշվապահական հաշվառման գրանցամատյանները,
դ. փոխկապակցել փաստաթղթային շրջանառությունը հաշվապահական գրանցամատյանների հետ,
ե. իրականացնում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ստուգումը և կատարված սխալ գրանցումների ուղղում,
զ. կատարում է փաստաթղթերի և գրանցամատյանների արխիվացում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որն իր մեջ ներառում է հաշվապահական փաստաթղթերի կազմում, համապատասխան գրանցամատյաններում գրանցումների իրականացում: Գործնական առաջադրանքում տրված տեղեկատվության հիման վրա պետք է լրացնի սկզբնական փաստաթղթի անհրաժեշտ վավերապայմանները և տեղի ունեցած գործառնության մնացած տվյալները: Դրանից հետո պետք է կազմած փաստաթղթի տվյալները գրանցի համապատասխան գրանցամատյանում: Պետք է իմանա թե որ փաստաթուղթը որ գրանցամատյանում է գրանցվում : Օրինակ, տրված տեղեկատվության հիման վրա պետք է լրացնի դրամարկղի մուտքի և ելքի օրդերները, պետք է դրանք գրանցի դրամարկղային գրքում կամ պետք է կազմի վաճառքի հաշիվ ապրանքագիրը և պետք է դրանք գրանցի վաճառքի գրքում, կամ կազմի աշխատանքի հաճախումների տաբել, աշխատանքի վարձատրության կարգագրեր և դրանց հիման վրա հաշվարկված աշխատավարձի գումարը արտացոլի աշխատողի անձնական քարտերում կամ աշխատավարձի կուտակման գրանցամատյանում և այլն: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքի ոչ պակաս քան 60 %-ը կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ հաշվապահական հաշվառման գործնական աշխատանքների ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 5. . Անալիտիկ և սինթետիկ հաշվառման հիմնավորումը, հաշվետվությունների կազմումը Կատարման չափանիշներ

- ա. Ճշտորեն ներկայացնում է սինթետիկ և անալիտիկ հաշվառման համակարգերը,
- բ. ըմբռնում է սինթետիկ և անալիտիկ հաշվառման տեղեկատվության փոխադարձ կապը,
- գ. ամփոփում է անալիտիկ հաշիվների մնացորդները և հանրագումարային արժեքով համադրում համապատասխան սինթետիկ հաշվի մնացորդի հետ,

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որն իր մեջ ներառում է հաշվապահական հաշվառման անալիտիկ և սինթետիկ հաշիվներում տրված պայմանական իրավիճակի/վարժության տվյալների/ գրանցում, ամփոփում և փոխադարձ կապի ներկայացում: Օրինակ կտրվի առաջադրանք տարբեր մատակարարներից ստացված տարբեր նյութերի վերաբերյալ: Տրված հաշիվ ապրանքագրերի տվյալներից օգտվելով պետք է կատարի գրանցումներ սինթետիկ հաշիվների մեջ և միաժամանակ յուրաքանչյուր մատակարարի և յուրաքանչյուր նյութի համար բացված սինթետիկ հաշվի մեջ: Այնուհետև պետք է կազմի անալիտիկ հաշիվների շրջանառության տեղեկագիր և դրա հանրագումարային տվյալները համեմատի սինթետիկ հաշվի տվյալների հետ և համոզվի կատարած աշխատանքի ճշտությամբ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքի ոչ պակաս քան 70 %-ը կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ հաշվապահական հաշվառման գործնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 6. Ակտիվների և պարտավորությունների գույքագրման անհրաժեշտության հիմնավորումը: Կատարման չափանիշներ

- ա. ընկալում է ակտիվների և պարտավորությունների գույքագրման դրդապատճառները,
- բ. կարողանում է բացատրել գույքագրման գործառնությունները հաշվապահական հաշվառման տեղեկատվության արժանահավատության գնահատման ոլորտում,
- գ. Գիտի գույքագրման տեսակները և ըմբռնում է գույքագրման հանձնաժողովների ձևավորման սկզբունքները,
- դ. ամփոփում է գույքագրման արդյունքները և կազմում գույքագրման «համեմատական տեղեկագրեր»

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որն իր մեջ ներառում է գույքագրման ցուցակների, ակտերի, համեմատական տեղեկագրերի կազմումը և գույքագրման արդյունքների հաշվապահական ձևակերպումը: Օրինակ, տրված կլինի նյութերի պահեստի գույքագրման ցուցակից տվյալներ և նյութերի անալիտիկ հաշվառման տվյալները: Դրանց

համեմատման արդյունքները պետք է արտացոլի համեմատական տեղեկագրում և ձևակերպի ավելցուկի կամ պակասորդի գումարը: Եթե պակասորդը վերագրվում է նյութապես պատասխանատու անձին, ապա պետք է կարողանա ձևակերպել պակասորդի գումարի փոխհատուցումը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքի ոչ պակաս քան 70 %-ը կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ հաշվապահական հաշվառման գործնական աշխատանքների ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ:

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՍՏԱԹՅԱԿՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԱԳՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՄԱՆ ՁԱԵՐ»

Սողուլի դասիչը «ՓՀՀՎ-4-09-005»

Սողուլի տևողությունը 36 ժամ

-տեսական պարապմունք 16 ժամ

-գործնական պարապմունք 20 ժամ

Սողուլի նպատակը՝ Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ կազմակերպությունում փաստաթղթավորման գործընթացի իրականացման, փաստաթղթաշրջանառության կազմակերպման և հաշվապահական հաշվառման վարման ձևերի վերաբերյալ:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «ՀՀՀ-4-09-004» մոդուլը

Արդյունքները

1. Փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության ընթացակարգերի տիրապետում
2. Իմանալ Հաշվապահական հաշվառման վարման ձևերը:

Գնահատման կարգ Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Փաստաթղթավորման և փաստաթղթաշրջանառության ընթացակարգերի տիրապետում

Կատարման չափանիշներ

ա. բացատրում է փաստաթղթավորում, փաստաթղթային հաշվառում, փաստաթղթային ներկայացում, փաստաթղթաշրջանառություն, հաշվապահական հաշվառման փաստաթուղթ հասկացությունները,

բ. ներկայացնում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի տեսակները, բնութագրել սկզբնական հաշվառման ներքին և արտաքին փաստաթղթերը, ներկայացնում կազմակերպության փաստաթղթաշրջանառության ժամանակացույցի օրինակելի ձևի բովանդակությունը, դրա կազմման և վերահսկման աշխատանքների իրականացումը,

գ. ներկայացնում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի դասակարգումը ըստ նշանակության, ըստ կազմելու և օգտագործելու եղանակի, ըստ հաշվապահական գրանցումների կատարման և այլն,

դ. բնութագրում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պարտադիր և լրացուցիչ վավերապայմանները, ներկայացնում հաշվապահական հաշվառման փաստաթղթերում ստորագրության իրավունք ունեցող անձանց,

ե. ներկայացնում սկզբնական հաշվառման փաստաթղթերի ստուգման եղանակները ըստ ձևի, ըստ բովանդակության, թվաբանորեն և համեմատության միջոցով,

զ. նկարագրում է հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում կատարված սխալ գրանցումների ուղղման սրբագրական, ճշտանցման, լրացուցիչ գրանցման եղանակները և դրանց կիրառությունը, ներկայացնում էական սխալների ուղղման մոտեցումները,

է. բնութագրում է առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, նման տեղեկատվության օգտագործումը, գաղտնիության պահպանումը և պատասխանատվությունը հրապարակման դեպքում,

ը. նկարագրում է հաշվապահական հաշվառման փաստաթղթերի արխիվացման գործընթացը

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, որն իր մեջ ներառում է առաջադրվող տվյալներով համապատասխան փաստաթղթերի կազմում/ ձեռքով կամ համակարգչային ծրագրով/, կազմած փաստաթղթերում և գրանցամատյաններում տեղ գտած սխալների ուղղում: Ուսանողին կտրվի նախապես կազմած փաստաթղթեր և կհանձնարարվի դրանք խմբավորել ըստ նշանակության, ըստ կազմելու և օգտագործելու եղանակի: Մինչև թղթակցության կազմելը պետ է կարողանա դրանք ստուգել ըստ ձևի/այսինքն ըստ անհրաժեշտ վավերապայմանների/, ըստ բովանդակության/ օրինակ, եթե պայմանագիր է, ապա դրա հիմնական կետերը/ և թվաբանորեն : Սխալների հայտնաբերման դեպքում պետք է իմանա հայտնաբերած սխալի ուղղման կարգը: Տրված փաստաթղթի հիման վրա համապատասխան ձևակերպումը կազմելուց հետո պետք է իմանա թե այդ փաստաթուղթը որ գրանցամատյանում պետք է գրանցվի և դրանից հետո ինչպես պետք է պահպանվի:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքի ոչ պակաս քան 70 %-ը կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ղասախոսություններ և գործնական աշխատանքներ` հաշվապահական հաշվառման գործնական աշխատանքների ձեռնարկից: Մոդուլի յուրացման համար անհրաժեշտ են համապատասխան հաշվապահական սկզբնական փաստաթղթեր և գրանցամատյաններ/դրամարկղային գիրք, վաճառքի գիրք, դեբիտորական պարտքերի գիրք և այլն/:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 18 ժամ

Արդյունք 2. Իմանալ Հաշվապահական հաշվառման վարման ձևերը

ա. ներկայացնում է հաշվապահական հաշվառման վարման համակարգի ընդհանուր բնութագիրը,

բ. նկարագրում է ֆինանսատնտեսական գործառնությունների գրանցման մայրմատյանային ձևով հաշվապահական հաշվառում վարելու համար կիրառվող գրանցամատյանների օրինակելի ձևերը, բովանդակությունը, նշանակությունը, դրանցում հաշվապահական գրանցումներ կատարելու եղանակները, հաջորդականությունը և դրանց միջև փոխադարձ կապը,

գ. նկարագրում է մեմորիալ-օրդերային ձևով հաշվապահական հաշվառում վարելու համար կիրառվող գրանցամատյանների օրինակելի ձևերը, բովանդակությունը, նշանակությունը, դրանցում հաշվապահական գրանցումներ կատարելու եղանակները, հաջորդականությունը և դրանց միջև փոխադարձ կապը,

դ. նկարագրում է մեմորիալ-մայրմատյանային ձևով հաշվապահական հաշվառում վարելու համար կիրառվող գրանցամատյանների օրինակելի ձևերը, բովանդակությունը, նշանակությունը, դրանցում հաշվապահական գրանցումներ կատարելու եղանակները, հաջորդականությունը և դրանց միջև փոխադարձ կապը,

ե. միևնույն պայմանական կազմակերպության օրինակի վրա ցուցադրում է հաշվապահական հաշվառման վարումը վերը նկարագրված յուրաքանչյուր ձևով, բնութագրում դրանց տարբերությունները, առավելություններն ու թերությունները, ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման կոնկրետ ձևի ընտրության չափանիշները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է ուսումնական պրակտիկայի անցկացման համար հատկացված դասաժամերին կատարված և ներկայացված գործնական աշխատանքի նյութերով, որն իր մեջ ներառում է պայմանական կազմակերպության նույն օրինակի վրա հաշվապահական հաշվառման վարումը մեմորիալ օրդերային և մայր մատյանային ձևով/ կամ այլ ձևով/, բնութագրում դրանց տարբերությունները, առավելություններն ու թերությունները, ներկայացնում հաշվապահական հաշվառման վարման կոնկրետ ձևի ընտրության չափանիշները/ թե որը երբ է հարմար կիրառել և ինչ նյութական կամ կադրային ռեսուրսներ են անհրաժեշտ տվյալ ձևը կիրառելու համար/:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքի ոչ պակաս քան 70 %-ը կատարվել է ճիշտ և կարողանում է բացատրել կատարված աշխատանքի իմաստը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ղասախոսություններ և գործնական աշխատանքներ` հաշվապահական հաշվառման գործնական աշխատանքների ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 18 ժամ:

Մոդուլի դասիչը «SS<<-4-09-006»

Մոդուլի տևողությունը 72 ժամ
-տեսական պարապմունք 20 ժամ
-գործնական պարապմունք 52 ժամ

Մոդուլի նպատակը` Տրամադրել ուսանողին հաշվապահական հաշվառման համար կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, որը հնարավորություն կտա ուսանողին մուտքագրել և կառավարել հաշվապահական հաշվառման ավտոմատացնող ծրագրային փաթեթները:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «<<<-4-09-002» մոդուլը

Արդյունքները

1. Իմանում է ձեռքով տարվող և համակարգչայնացված հաշվապահական համակարգերի հարաբերական առավելությունները և թերությունները
2. Կարող է ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ձևերը ֆինանսական և դրան առնչվող տեղեկատվության մշակման մեջ

Գնահատման կարգ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանում է ձեռքով տարվող և համակարգչայնացված հաշվապահական համակարգերի հարաբերական առավելությունները և թերությունները

Կատարման չափանիշներ

ա. ներկայացնում է ձեռքով տարվող համակարգից համակարգչայնացված համակարգին անցնելու հնարավորությունները,

բ. բնութագրում է հաշվառումն իրականացնելիս համակարգչի առավելությունները և թերությունները, համակարգչային համակարգի օգտակարությունը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է հարց ուպատասխանի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ հիմնական հասկացությունների մասին: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստային աշխատանքը 60-70%-ով ճիշտ կատարվի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ղասախոսություններ և գործնական աշխատանքներ` հաշվապահական հաշվառման գործնական աշխատանքների ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 18 ժամ

Արդյունք 2.Ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ձևերը ֆինանսական և դրան առնչվող տեղեկատվության մշակման մեջ

Կատարման չափանիշներ

ա. գիտի տեղեկատվության հասկացությունը, տեսակները և առանձնահատկությունները

բ. ներկայացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բնագավառները,

գ. բնութագրում է գործող համալիր (ինտեգրացված) հաշվապահական փաթեթների հիմնական խմբերը, միկրո-համակարգչային հաշվապահական հաշվառման փաթեթները,

դ. ներկայացնում է տեքստային խմբագրման աշխատանքների բնութագրերը և կատարման հաջորդականությունը, էլեկտրոնային աղյուսակների հետ աշխատելու սկզբունքները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա` մասնավորապես 1-Ց կամ ՀԾ- Հաշվետար, ՀԾ-Հաշվապահ 3 հաշվապահական փաթեթների միջոցով ցույց է տրվում ինֆորմացիայի մուտքագրումը, սկզբնական փաստաթղթերի կազմումը ծրագրի միջոցով, դրանց մեջ պարունակող տեղեկատվության ամփոփումը` մինչև ֆինանսական հաշվետվությունների կազմելը: Ուսանողին կտրվի առաջադրանք ծրագրի օգնությամբ տրված նախնական իֆորմացիայի հիման վրա կազմել այս կամ այն փաստաթուղթը(օրինակ դրամարկղի մուտքի օրդեր, հաշիվ ապրանքագիր, աշխատողի անձնական քարտ և այլն), դրա հիման վրա կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումը, գրանցել զխավոր գրքում և ստացված տեղեկատվությունը արտացոլել ֆինանսական հաշվետվություններում:

Արդյունքի յուրացումը դրական կգնահատվի, եթե ուսանողը կարողանա ստեղծել սկզբնական փաստաթուղթը և դրա հիման վրա կազմել հաշվապահական ձևակերպումը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ղասախոսություններ և գործնական աշխատանք համակարգչային սրահում համակարգիչներում նախապես ներդրած հաշվապահական ծրագրերի օգնությամբ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 54 ժամ

ՄՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ «ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ»

Մոդուլի դասիչը «ՀՄՀ-4-09-007»

Մոդուլի տևողությունը 36 ժամ

-տեսական պարապմունք 18 ժամ

-գործնական պարապմունք 18 ժամ

Մոդուլի նպատակը` Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ «Հիմնական միջոցներ» ստանդարտով սահմանված հիմնական միջոցների հաշվառման հիմնական մոտեցումների և պահանջների, հիմնական միջոցների հետ կապված տնտեսական գործառնությունների հաշվապահական հաշվառման վերաբերյալ:

Մուտքային պահանջներ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «ՀՀՀ-4-09-004» մոդուլը

Արդյունքները

1. Իմանալ «Հիմնական միջոցներ» ստանդարտի հիմնական հասկացությունները
2. Տիրապետել հիմնական միջոցների ձեռք բերման փաստաթղթավորմանը և մուտքի սկզբնական հաշվառմանը
3. Տիրապետում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման մեթոդաբանությանը
4. Հիմնական միջոցների օտարման և ելքի հաշվառում:
5. Հիմնական միջոցների գույքագրման արդյունքների հաշվառում
6. Հիմնական միջոցների հետ կապված տնտեսական գործառնությունները, դրանց փաստաթղթավորումը և հաշվապահական հաշվառումը

Գնահատման կարգ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ «Հիմնական միջոցներ» ստանդարտի հիմնական հասկացությունները

Կատարման չափանիշներ

- ա. բնութագրում է թե որ նյութական ակտիվներն են դասակարգվում որպես հիմնական միջոցներ, բերել կոնկրետ օրինակներ,
- բ. թվարկում է հիմնական միջոցների դասերը (շենքեր, կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ, մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, արտադրական գույք և գործիքներ, բազմամյա տնկարկներ, բանող և մթերատու անասուններ, այլ հիմնական միջոցներ),

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ հիմնական միջոցների սահմանման, դասակարգման, այդ թվում հիմնական միջոցների առանձին խմբերի, գնահատման/ սկզբնական արժեք, իրական արժեք, հաշվեկշռային արժեք և այլն/ վերաբերյալ: Հարցադրումների մեջ պետք է լինեն հարցեր սկզբնական արժեքի բաղադրիչների, իրական արժեքով գնահատման անհրաժեշտության, հաշվեկշռային արժեքի որոշման կարգի, հիմնական միջոցի միավորի ժանաչման չափանիշների մասին :

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրվող թեստի 70 %-ը կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ` « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 4 ժամ:

Արդյունք 2 Տիրապետել հիմնական միջոցների ձեռք բերման փաստաթղթավորմանը և մուտքի սկզբնական հաշվառմանը

Կատարման չափանիշներ

- ա. Գիտի հիմնական միջոցների մուտքագրան փաստաթղթերը, դրանց կազմման և հաշվապահությունում պահելու կարգը
- բ. կարողանում է մուտքի սկզբնական փաստաթղթերի հիման վրա կազմել հիմնական միջոցների գույքային հաշվառման քարտեր
- գ. կարողանում է սկզբնական փաստաթղթերի հիման վրա կազմել հիմնական միջոցների մուտքի ձևակերպումներ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի մուտքի համապատասխան փաստաթուղթը ձեռքով կամ համակարգչային ծրագրից օգտվելով, դրա հիման վրա կազմի համապատասխան հաշվապահական ձևակերպումներ: պետք է կարողանա տարբերակել հիմնական միջոցների մուտքագրման, շահագործման հանձնման ակտերը գույքային քստերից, իմանա դրանց հետագա պահելու և օգտագործելու կարգը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում գիտի յուրաքանչյուր փաստաթղթի կամ հաշվային ռեգիստրի նշանակությունը, հիմնական ռեկվիզիտները և կարողանում է ձևակերպել մուտքի հիմնական թղթակցությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ` « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 6 ժամ:

Արդյունք 3. Տիրապետում է հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման մեթոդոլոգիային

Կատարման չափանիշներ

ա. սահմանում է թե ինչ է իրենից ներկայացնում հիմնական միջոցների մաշվածությունը, բերել կոնկրետ օրինակներ,

բ. հաշվարկում է հիմնական միջոցների մաշվածությունը համապատասխան մեթոդներով, բերել կոնկրետ օրինակներ,

գ. սահմանում է թե ինչ է հիմնական միջոցների օգտակար ծառայությունը և մնացորդային արժեքը,

դ. կոնկրետ օրինակներով կատարում է մաշվածության գումարի հաշվարկ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի մաշվածության գումարի հաշվարկ` ելնելով առաջադրանքում տրված տվյալներից, առաջադրվող հաշվարկման մեթոդից: Աշխատանքը կարող է կատարել ձեռքով կամ համակարգչային ծրագրից օգտվելով: Հաշվարկի հիման վրա պետք է կազմի համապատասխան հաշվապահական ձևակերպումներ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում գիտի մաշվածության գումարի որոշման կարգը և կարողանում է կազմել հիմնական թղթակցությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ` « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 6 ժամ

Արդյունք 4. Հիմնական միջոցների օտարման և ելքի հաշվառում:

Կատարման չափանիշներ

ա. նկարագրում է թե որն է համարվում հիմնական միջոցների օտարում (իրացում, լուծարում, ներքին տեղափոխում, անհատույց հանձնում, վարձակալության հանձնում)

բ. բնութագրում է հիմնական միջոցների դուրս գրման փաստաթղթային ձևակերպման կարգը

գ. կոնկրետ օրինակներ բնութագրում է թե ինչպես է կատարվում հիմնական միջոցների ելքի հաշվառումը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի հիմնական միջոցների դուրս գրման ակտը (ձեռքով կամ համակարգչային ծրագրից օգտվելով), իսկ դրա հիման վրա` համապատասխան հաշվապահական ձևակերպումներ: Վաճառքի դեպքում պետք է կազմի նաև հաշիվ ապրանքագիր բոլոր անհրաժեշտ վավերապայմաններով և դրա հիման վրա ձևակերպի վաճառքը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում գիտի յուրաքանչյուր փաստաթղթի կամ հաշվային ռեգիստրի նշանակությունը, հիմնական ռեկվիզիտները և կարողանում է ձևակերպել լուծարքի և վաճառքի ժամանակ կազմվող հիմնական թղթակցությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ` « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 4 ժամ:

Արդյունք 5. Հիմնական միջոցների գույքագրման արդյունքների հաշվառում

Կատարման չափանիշներ

- ա. Գիտի թե երբ է անհարժեշտ կատարել հիմնական միջոցների գույքագրում,
- բ. սահմանում է թե ինչպես պետք է կազմակերպել հիմնական միջոցների գույքագրումը համապատասխան կանոններով,
- գ. կատարում է հիմնական միջոցների գույքագրման «համեմատական տեղեկագրերի» կազմում և արդյունքների ամփոփում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի հիմնական միջոցների գույքագրման ցուցակ կամ ակտ (ձեռքով կամ համակարգչային ծրագրից օգտվելով), իսկ դրա հիման վրա՝ հիմնական միջոցների գույքագրման արդյունքների «համեմատական տեղեկագիր»: Վերջինիս հիման վրա ելնելով ավելցուկի կամ պակասորդի առկայության փաստից պետք է կազմի համապատասխան հաշվապահական ձևակերպումներ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում գիտի յուրաքանչյուր փաստաթղթի կամ հաշվային ռեգիստրի նշանակությունը, դրանց հիմնական ռեկվիզիտները և կարողանում է ձևակերպել ավելցուկի կամ պակասորդի ժամանակ կազմվող հիմնական թղթակցությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ղասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 4 ժամ:

Արդյունք 6. Հիմնական միջոցների հետ կապված տնտեսական գործառնությունները, դրանց փաստաթղթավորումը և հաշվապահական հաշվառումը

Կատարման չափանիշներ

- ա. նկարագրում է հիմնական միջոցների հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները՝ ձեռք բերում , պահեստի մուտք ,ելք , իրացում, դուրս գրում և այլն , դրանց փաստաթղթավորումը,
- բ. լրացնում է հիմնական միջոցների հետ կապված սկզբնական հաշվառման փաստաթղթերը,
- գ. նկարագրում է հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման հաշիվները և հիմնական միջոցների հետ կապված տնտեսական տիպային գործառնությունների գծով պարզ թղթակցությունները,
- դ. կատարում է հիմնական միջոցների հաշվառման սկզբնական փաստաթղթերի տվյալների գրանցումը համապատասխան գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում,
- ե. պատրաստում է հիմնական միջոցների շարժի (սկզբնական արժեք, մուտք , հաշվարկված մաշվածություն , ելք, մնացորդային արժեք) հաշվապահական հաշվետվություններ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է ուսումնական պրակտիկայի ժամերին կատարված ընդհանրացնող գործնական աշխատանքի արդյունքների հիման վրա, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի հիմնական միջոցների ձեռք բերման, մուտքի և օտարման փաստաթղթերը և դրանց հիման վրա համապատասխան հաշվապահական ձևակերպումները, պետք է կատարվի հիմնական միջոցների մաշվածության հաշվարկ՝ հաշվի առնելով հիմնական միջոցների կազմում տեղի ունեցած փոփոխությունները և որոշվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում կարողանում է ներկայացված փաթեթից բանավոր հարցման ժամանակ բացատրել կատարված աշխատանքի բովանդակությունը և գիտի յուրաքանչյուր փաստաթղթի կամ հաշվային ռեգիստրի նշանակությունը, հիմնական ռեկվիզիտները և կարողանում է ձևակերպել մուտքի, լուծարքի և վաճառքի ժամանակ կազմվող հիմնական թղթակցությունները և որոշի հաշվեկշռային արժեքը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Ղասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	«ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ»
Մոդուլի դասիչը	ՊՇՀ-4-09-008
Մոդուլի տևողությունը	36 ժամ
-տեսական պարապմունք	16 ժամ
-գործնական պարապմունք	20 ժամ

Մոդուլի նպատակը` Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ «Պաշարներ» ստանդարտով սահմանված պաշարների հաշվառման պահանջների, պաշարների հետ կապված տնտեսական գործառնությունների հաշվապահական հաշվառման վերաբերյալ:

Մուտքային պահանջներ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՀՀ-4-09-004» մոդուլը:

Արդյունքները

1. Պաշարների սահմանումը, դասակարգումը, գնահատումը:
2. Պաշարների ձեռքբերման և մուտքի հաշվառումը:
3. Պաշարների օգտագործման և դուրս գրման հաշվառումը:
4. Պաշարների հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները, դրանց փաստաթղթավորումն ու հաշվապահական հաշվառումը:

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Պաշարների սահմանումը, դասակարգումը, գնահատումը:

Կատարման չափանիշներ

- ա. բնութագրել, թե որ ակտիվներն են դասակարգվում որպես պաշարներ,
- բ. թվարկել պաշարների կազմը (նյութեր, աճեցվող և բթվող կենդանիներ, արագամաշ առարկաներ, անավարտ արտադրություն, արտադրանք, ապրանքներ) և դրանց բաղկացուցիչները, բերել կոնկրետ օրինակներ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի միջոցով, որն իր մեջ ներառում է հարցադրումներ հիմնական հասկացությունների մասին, մասնավորապես պաշարների սահմանման, դասակարգման, գնահատման, հաշվեկշռում ներկայացվող հոդվածների մասին և այլն: Պետք է կարողանա տարբերել նյութեր, աճեցվող և բթվող կենդանիներ, արագամաշ առարկաներ, անավարտ արտադրություն, արտադրանք, ապրանքներ հասկացությունները և դրանց բաղկացուցիչները :Պետք է լինեն հարցեր գնվող պաշարի և արտադրվող պաշարի ինքնարժեքի որոշման և դրա բաղկացուցիչների մասին, հարցադրում երբ կամ իՖչպես են որոշում պաշարի իրացման զուտ արժեքը և այլն:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե թեստային աշխատանքը 60-70%-ով ճիշտ կատարվի:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, տեստային աշխատանքներ ուսումնական ձեռնարկում պարունակվող նյութերի հիման վրա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 4ժամ:

Արդյունք 2. Պաշարների ձեռքբերման և մուտքի հաշվառում

Կատարման չափանիշներ

- ա. բացատրել նյութերի ձեռքբերման տարբերակները և գնահատման մոտեցումները
- բ. ներկայացնում է արագամաշ առարկաների հասկացությունը և հաշվառման առանձնահատկությունները
- գ. ներկայացնում է անավարտ արտադրության և պատրաստի արտադրանքի հաշվառման մոտեցումները
- դ. ներկայացնում է ապրանքների հաշվառման առանձնահատկությունները մեծածախ և մանրածախ առևտրում

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմվի մատակարարի հաշիվ ապրանքագիր, դրա հիման վրա` նյութերի, արագամաշ առարկաների, ապրանքների մուտքի օրդեր, վերջինիս հիման վրա պետք է կազմվի նյութերի, արագամաշ առարկաների և ապրանքների մուտքի թղթակցությունները: Նույն ձևով տրված նախնական ինֆորմացիայի հիման վրա ուսանողը պետք է կարողանա ձևակերպել հիմնական արտադրության ծախսումները և դրա բաշխումը պատրաստի և անավարտ արտադրության միջև: Կարևորվում է նաև ապրանքների ձեռք բերման և վաճառքի գործառնությունների հաշվառման առանձնահատկության իմացությունը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում գիտի յուրաքանչյուր փաստաթղթի կամ հաշվային ռեգիստրի նշանակությունը, հիմնական ռեկվիզիտները և կարողանում է ձևակերպել պաշարների ձեռք բերման, օգտագործման ժամանակ կազմվող հիմնական թղթակցությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 10 ժամ

Արդյունք 3. Պաշարների օգտագործման և դուրս գրման հաշվառումը

Կատարման չափանիշներ

ա. բացատրում է օտարված(օգտագործված) պաշարների գնահատման մոտեցումները,

բ. նկարագրում է արտադրանքի և այլ ակտիվների ստեղծման նպատակով

օգտագործված պաշարների և արագամաշ առարկաների ծախսագրումը,

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի նյութերի դուրս գրման ժամանակ կազմվող պահանջագիր, լիմիթային քարտ, ելքի օրդեր: Դրանց հիման վրա պետք է ըստ առաջադրված մեթոդի(ԱՄԱԵ, միջին կշռված գնի) կատարվի նյութերի գնահատում և ձևակերպվի դուրս գրումը ըստ օգտագործման կամ ծախսի նպատակային ուղղությունների:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում գիտի յուրաքանչյուր փաստաթղթի կամ հաշվային ռեգիստրի նշանակությունը, հիմնական ռեկվիզիտները և կարողանում է ձևակերպել օգտագործման և վաճառքի ժամանակ կազմվող հիմնական թղթակցությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 10 ժամ

Արդյունք 4. Պաշարների հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները, դրանց փաստաթղթավորումն ու հաշվապահական հաշվառումը

Կատարման չափանիշներ

ա.կարող է նկարագրել պաշարների հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները՝ ձեռք բերում, պահեստի մուտք, ելք, ծախսագրում, իրացում, դուրս գրում և այլն, դրանց փաստաթղթավորումը,

բ. կարող է կազմել, լրացնել պաշարների հետ կապված սկզբնական հաշվառման փաստաթղթերը,

գ. գիտի պաշարների հաշվապահական հաշվառման հաշիվները և պաշարների հետ կապված տնտեսական տիպային գործառնությունների գծով պարզ թղթակցությունները,

դ. կատարում է պաշարների հաշվառման սկզբնական փաստաթղթերի

տվյալների գրանցում համապատասխան

գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում

ե. նկարագրում է պաշարների գույքագրման գործընթացը, փաստաթղթավորումը և արդյունքների ամփոփման կարգը,

զ. պատրաստում է պաշարների շարժի (սկզբնական մնացորդներ, մուտք, ելք, վերջնական մնացորդներ) հաշվապահական հաշվետվություններ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է ուսումնական պրակտիկայի ժամերին կատարված ընդհանրացնող գործնական աշխատանքի արդյունքների հիման վրա, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի պաշարների ձեռք բերման, մուտքի և օտարման փաստաթղթերը և դրանց հիման վրա համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում կարողանում է բանավոր հարցման ժամանակ բացատրել կատարված աշխատանքի բովանդակությունը և գիտի յուրաքանչյուր փաստաթղթի կամ հաշվային ռեգիստրի նշանակությունը, հիմնական ռեկվիզիտները և կարողանում է ձևակերպել մուտքի, օգտագործման և վաճառքի ժամանակ կազմվող հիմնական թղթակցությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ « Հաշվապահական հաշվառման» ուսումնական ձեռնարկից:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

ՍՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԴՄՀ-4-09-009

Մոդուլի տևողությունը 36 ժամ

-տեսական պարապմունք 18 ժամ

-գործնական պարապմունք 18 ժամ

Մոդուլի նպատակը Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ դրամական միջոցների հաշվապահական հաշվառման վերաբերյալ:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «ՀՀ-4-09-004» մոդուլը:

Արդյունքները

- 1.«Դրամական գործառնությունների տեսակները և դրանց օրենսդրական կարգավորումը»
- 2.Դրամական գործառնությունների փաստաթղթավորումն ու դրամական միջոցների հաշվապահական հաշվառումը

գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. «Դրամական գործառնությունների տեսակները և դրանց օրենսդրական կարգավորումը»

Կատարման չափանիշներ

- ա. նկարագրում է անկանխիկ հաշվարկների ձևերը (վճարման հանձնարարականներով, ակրեդիտիվով, չեկերով, վճարային քարտերով հաշվարկներ), դրանց կիրառությունը և իրականացման կարգը,
- բ. ճիշտ է ներկայացնում կանխիկ հաշվարկների կիրառությունը, դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը, դրանց նկատմամբ օրենքով սահմանված սահմանափակումները և պատասխանատվությունը օրենսդրության պահանջների խախտման համար:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ դրամարկղային և բանկային գործառնությունների մասին, դրանց տեսակների, վարման կարգի, կանխիկ և անկանխիկ հաշվարկների(վճարման հանձնարարականներով, ակրեդիտիվով, չեկերով, վճարային քարտերով հաշվարկներ), դրամարկղային գործառնությունների իրականացման կարգի, դրանց նկատմամբ օրենքով սահմանված սահմանափակումների և օրենսդրության պահանջների խախտման համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում պարունակվող հարցերի ոչ պակաս քան 60 տոկոսը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ` օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը և դրամական հոսքերի շարժը կարգավորող օրենսդրական ակտերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 10 ժամ

Արդյունք 2. Դրամական գործառնությունների փաստաթղթավորումն ու դրամական միջոցների հաշվապահական հաշվառումը

Կատարման չափանիշներ

- ա. կարողանում է լրացնել դրամարկղային գործառնությունների սկզբնական հաշվառման փաստաթղթերը` դրամարկղային մուտքի օրդեր, ելքի օրդեր, վճարային տեղեկագիր, առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություն, կատարել գրանցումներ դրամարկղային գրքում,
- բ. կարողանում է կազմել վճարման հանձնարարականներ, լրացնել կանխիկի ստացման բանկային չեկային գրքույկ, բանկային հաշվից քաղվածքի հիման վրա մեկնաբանել իրականացված գործարքները,
- գ. գիտի դրամական միջոցների հաշվապահական հաշվառման հաշիվները և դրանց հաշվառման հետ կապված տիպային թղթակցությունները,
- դ. կարող է պատրաստել դրամական միջոցների շարժի հաշվապահական հաշվետվություններ:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա: Պետք է տրված նախնական տեղեկատվության հիման վրա կազմի դրամարկղային մուտքի օրդեր, ելքի օրդեր, վճարային տեղեկագիր, առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվություն, կատարի գրանցումներ դրամարկղային գրքում, կազմի վճարման հանձնարարականներ, բանկային հաշվից քաղվածքի հիման վրա մեկնաբանի իրականացված գործարքները: Սկզբնական փաստաթղթերի հիման վրա կարողանում է կազմել դրամական միջոցների հաշվապահական հաշվառման հետ կապված տիպային թղթակցությունները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե կարողանա լրացնել սկզբնական փաստաթղթերը ըստ պահանջվող ռեկվիզիտների և դրանց հիման վրա կազմի հաշվապահական ձևակերպումներ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական պարապմունքներ հաշվապահական փաստաթղթերի լրացմամբ՝ տիպային բլանկների վրա կամ էլեկտրոնային տարբերակով, ուսումնական ձեռնարկում առաջադրվող վարժությունների տվյալներով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 26 ժամ:

ՄՈԴՈՒԽ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀԱՆՎԱՌՈՒՄ»

Մոդուլի դասիչը ԴԿՀ-4-09-010

Մոդուլի տևողությունը 72 ժամ

-տեսական պարապմունք 36 ժամ

-գործնական պարապմունք 36 ժամ

Մոդուլի նպատակը Սովորողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հաշվառման հիմնական մոտեցումների, պահանջների, և դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հաշվապահական հաշվառման վերաբերյալ:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «ՀՀՀ-4-09-004» մոդուլը:

Արդյունքները

1. Իմանում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հիմնական հասկացությունները, դրանց ձևաչման, չափման և ապաձևաչման մոտեցումները
2. Կատարում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փաստաթղթավորում ու հաշվապահական հաշվառում
3. Աշխատավարձի հաշվարկ և սինթետիկ հաշվառում

գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Իմանալ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հիմնական հասկացությունները, դրանց ձևաչումը, չափումը և ապաձևաչումը

Կատարման չափանիշներ

- ա. ներկայացնում է դեբիտորական, կրեդիտորական պարտքերի դասակարգումը ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների,
- բ. ներկայացնում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվային բաղադրիչները,
- գ. ներկայացնում է դեբիտորական, կրեդիտորական պարտքերի ձևակերպման և դուրսգրման սկզբունքները (անհրաժեշտ պայմանները):

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիման վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հասկացության, դրանց ձևավորման/ երբ է առաջանում ԴՊ վաճառքի գծով, ԿՊ գնումների գծով, ԿՊ աշխատավարձի գծով, ԿՊ բյուջեին և այլն/ դրանց հաշվային բաղադրիչների , դրանց հաշվառումը կարգավորող օրենսդրական ակտերով նախատեսված պարտավորության ձևակերպման և դուրս գրման վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում պարունակվող հարցերի ոչ պակաս քան 60 տոկոսը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ՝ օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը և դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի հաշվառումը կարգավորող օրենսդրական ակտերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 24 ժամ

Արդյունք 2. Կատարել դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փաստաթղթավորումն ու հաշվապահական հաշվառում

Կատարման չափանիշներ

- նկարագրում է այն հիմնական տնտեսական գործառնությունները, որոնց արդյունքում ձևավորվում են դեբիտորական, կրեդիտորական պարտքերը և դրանց խմբավորումը ըստ տնտեսական գործառնությունների բնույթի (դեբիտորական պարտքեր վաճառքների գծով, այլ եկամուտների գծով, տրված կանխավճարներ, այլ դեբիտորական պարտքեր, կրեդիտորական պարտքեր գնումների գծով, ստացված կանխավճարներ, կրեդիտորական պարտքեր բյուջեին, կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով և այլն),
- կարողանում է կազմել, լրացնել դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հետ կապված սկզբնական հաշվառման փաստաթղթերը,

- կարող է ներկայացնել դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հաշվապահական հաշվառման հաշիվները և դրանց հաշվառման հետ կապված տիպային թղթակցությունները,
- կարողանում է կատարել դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հաշվառման սկզբնական փաստաթղթերի տվյալների գրանցումը համապատասխան գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում,
- կարող է պատրաստել դեբիտորական, կրեդիտորական պարտքերի շարժի հաշվապահական հաշվետվություն:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական առաջադրանքի տեսքով, մասնավորապես տրված առաջադրանքի տվյալներով պետք է լրացնի պահանջվող փաստաթուղթը ապառիկ վաճառքի կամ գնումների վերաբերյալ և դրա հիման վրա կազմի համապատասխան հաշվապահական ձևակերպումը: Պետք է կարողանա փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը գրանցել պահանջվող գրանցամատյանում կամ համակարգչային ծրագրով նախատեսված հաշվային ռեգիստրում, կարող է պատրաստել դեբիտորական, կրեդիտորական պարտքերի մնացորդների հաշվետվություն:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե տրված առաջադրանքի հիմնական պահանջները կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական պարապմունքներ հաշվապահական փաստաթղթերի լրացմամբ՝ տիպային բլանկների վրա կամ էլեկտրոնային տարբերակով, ուսումնական ձեռնարկում առաջադրվող վարժությունների տվյալներով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 24 ժամ

Արդյունք 3. Աշխատավարձի հաշվարկ և սինթետիկ հաշվառում

Կատարման չափանիշներ

- ա. կարող է հաշվարկել աշխատավարձ, ,
- բ. թվարկում է աշխատավարձից կատարվող նվազեցումները
- գ. հաշվարկում է արձակուրդային, վերջնահաշվարկ, անաշխատունակության թերթիկով վճարում,
- դ. նկարագրում է եկամուտների և ծախսերի հետ կապված հիմնական տնտեսական գործառնությունները և դրանց փաստաթղթավորումը,
- ը. կազմում է աշխատավարձի հաշվարկային տեղեկագիր և նկարագրել աշխատավարձի, արձակուրդային հաշվարկի, անաշխատունակության թերթիկով վճարումների հետ կապված պարզ թղթակցությունները,
- թ. կազմում է աշխատավարձի վճարային տեղեկագիր:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է ուսումնական պրակտիկայի ժամանակ կատարված գործնական առաջադրանքի մջջոցով: Մասնավորապես տրված առաջադրանքի տվյալներով պետք է լրացնի պահանջվող փաստաթուղթը գործավարձային կամ ժամանակավարձային աշխատավարձի համար, կազմի աշխատանքի հաճախումների տաբել, անհատական կամ բրիգադային կարգագրեր, կազմի աշխատավարձի հաշվարկ՝ հաշվարկված աշխատավարձից կատարելով օրենսդրությամբ պահանջվող պահումները, կազմի աշխատավարձի վճարման տեղեկագիր: Պետք է կարողանա կատարել արձակուրդային աշխատավարձի, ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկ: Պետք է կարողանա փաստաթղթում պարունակվող տեղեկատվության հիման վրա կազմել համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե տրված առաջադրանքի հիմնական պահանջները կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական պարապմունքներ հաշվապահական փաստաթղթերի լրացմամբ՝ տիպային բլանկների վրա կամ էլեկտրոնային տարբերակով, ուսումնական ձեռնարկում առաջադրվող վարժությունների տվյալներով:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 24 ժամ:

ՍՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ «ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ: ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ

ՀԱՇՎԱՌՈՒՄ»

Սողուլի դասիչը ՍԿԵՀ-4-09-011

Սողուլի տևողությունը	36	ժամ
-տեսական պարապմունք	18	ժամ
-գործնական պարապմունք	18	ժամ

Մոդուլի նպատակը Մովորողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ սեփական կապիտալի բաղադրիչների, ակտիվների վաճառքից հասույթի հաշվառման հիմնական մոտեցումների և պահանջների, եկամուտների և ծախսերի հետ կապված տնտեսական գործառնությունների, հաշվապահական հաշվառման վերաբերյալ:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «ՀՀ-4-08-002» մոդուլը:

Արդյունքները

1. Ըստ բաղադրիչների սեփական կապիտալի հաշվառում
2. Եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագիրը ըստ ձևավորման ոլորտների
3. Իրացումից հասույթի հաշվառման հիմնական մոտեցումները և պահանջները
4. Սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի փաստաթղթավորումը և հաշվապահական հաշվառումը

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Ըստ բաղադրիչների սեփական կապիտալի հաշվառում

Կատարման չափանիշներ

- ա. ներկայացնում է սեփական կապիտալի բաղադրիչները,
- բ. սահմանում է թե ինչպես է ձևավորվում կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալը: Ծանոթ է բաժնետիրական կապիտալի տարրերը կազմող հասարակ և արտոնյալ բաժնետոմսերի անալիտիկ հաշվառման գրանցամատյաններին

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ սեփական կապիտալի հաշվային բաղադրիչների / կանոնադրական կապիտալ, կուտակված շահույթ, պահուստային կապիտալ, էմիսիոն եկամուտ և այլն/, դրանց հաշվառումը կարգավորող օրենսդրական ակտերով և հաշվապահական ստանդարտներով նախատեսված մոտեցումների, մասնավորապես հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի ձևավորման, շահույթի բաշխման կարգի, կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի ձևավորման սկզբունքների վերաբերյալ և այլն:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 60 տոկոսը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապունքներ` օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 8 ժամ

Արդյունք 2. Եկամուտների և ծախսերի ընդհանուր նկարագիրը ըստ ձևավորման ոլորտների

Կատարման չափանիշներ

- ա. սահմանել եկամուտ և ծախս հասկացությունները և բերել կոնկրետ օրինակներ,
- բ. սահմանել թե որ եկամուտները և ծախսերն են համարվում գործառնական գործունեությունից, ոչ գործառնական, արտասովոր

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ եկամուտների և ծախսերի հաշվային բաղադրիչների` գործառնական, ոչ գործառնական, արտասովոր դեպքերից ձևավորված եկամուտների և ծախսերի մասին, դրանց հաշվառումը կարգավորող օրենսդրական ակտերով և հաշվապահական ստանդարտներով նախատեսված մոտեցումների վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 60 տոկոսը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապունքներ` օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը 8 ժամ

Արդյունք 3. Իրացումից հասույթի հաշվառման հիմնական մոտեցումները և պահանջները

Կատարման չափանիշներ

- ա. Կարող է առանձնացնել հասույթը այլ տիպի եկամուտներից, բերել կոնկրետ օրինակներ,
- բ. գիտի հասույթի ճանաչման չափանիշները:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա, մասնավորապես տրված տեղեկատվության հիման վրա պետք է կազմի հաշիվ ապրանքագիր՝ պահպանելով պահանջվող ռեկվիզիտները և դրա հիման վրա կազմի համապատասխան ձևակերպումներ: Պետք է կարողանա ձևակերպել գնորդների կողմից հետ վերադարձված արտադրանքը, ճշտի վաճառքից ձանաչված հասույթի գումարը: Պետք է կարողանա ձևակերպել վաճառված արտադրանքի դուրս գրումը փաստացի արտադրական ինքնարժեքով և որոշի վաճառքից ֆինանսական հետևանքը: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե կարողանա կատարել տրված առաջադրանքը և բանավոր հարցման ժամանակ ներկայացնել կատարված աշխատանքի բովանդակությունը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը և հաշվապահական բլանկները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 10 ժամ

Արդյունք 4. Սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի փաստաթղթավորումը և հաշվապահական հաշվառումը

Կատարման չափանիշներ

ա. գիտի կազմել, լրացնել, օգտագործել եկամուտների և ծախսերի հաշվառման հետ կապված բոլոր սկզբնական փաստաթղթերը,

բ. կարող է նկարագրել սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի հաշվապահական հաշվառման հաշիվները և դրանց հետ կապված տնտեսական գործառնությունների գծով պարզ թղթակցությունները,

գ. կարող է գրանցել եկամուտների և ծախսերի հաշվառման հետ կապված սկզբնական փաստաթղթերը համապատասխան գրանցամատյաններում և հաշվապահական հաշիվներում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է ուսումնական պրակտիկայի դասաժամին կատարված ներկայացված գործնական աշխատանքի հիման վրա: Կատարված աշխատանքը պետք է պարունակի տարբեր եկամուտների և ծախսերի ձևավորման իրավիճակները հիմնավորող սկզբնական փաստաթղթեր, դրանց հիման վրա հաշվային ռեգիստրներում կատարված գրանցումներ և դրանց հիման վրա կազմված համապատասխան ձևակերպումներ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե կարողանա բանավոր հարցման ժամանակ ներկայացնել կատարված աշխատանքի բովանդակությունը և պատասխանել մոդուլին առնչվող սկզբունքային հարցերին:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ՝ օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը և հաշվապահական բլանկները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը ԿՀՀ-4-09-012

Մոդուլի տևողությունը 18 ժամ

-տեսական պարապմունք 6 ժամ

-գործնական պարապմունք 12 ժամ

Մոդուլի նպատակը Սովորողին տրամադրել կառավարչական հաշվառման վարման առաջնային գիտելիքներ, որպեսզի սովորողը տիրապետի ծախսումների հաշվառման կազմակերպման, ինքնարժեքի կալկուլյացման, ինչպես նաև ծախսային հոսքերի ներքին հաշվետվությունների լրացման հմտություններին:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի «ՀՀՀ-4-09-004» մոդուլը:

Արդյունքները

1. Կազմակերպության (մատուցվող ծառայությունների) ծախսերի բնութագրումը

2. Արտադրության (մատուցվող ծառայությունների) ծախսումների բնութագրումը

գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Արտադրության (մատուցվող ծառայությունների) ծախսերի բնութագրումը

Կատարման չափանիշներ

ա. ուսանողը կարող է բնորոշել ծախսերը և ծախսումները,

բ. կարող է տարբերակել հիմնական և վերադիր ծախսումները, փոփոխում և հաստատուն ծախսումները, ուղղակի և անուղղակի ծախսումները,

գ. ծախսումների հաշվառման նպատակով կարողանում է օգտվել հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի 8-րդ դասից,

դ. կատարում է գրանցումներ ծախսումները և ծախսերը հաշվառող համապատասխան հաշվապահական հաշիվներում:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական աշխատանքի հիման վրա, մասնավորապես տրված ծախսերը և ծախսումները պետք է խմբավորվի ըստ հիմնական և վերադիր, փոփոխում և հաստատուն, ուղղակի և անուղղակի ծախսումների, միաժամանակ պետք է 8-րդ դասի հաշիվներից առանձնացնի տվյալ ծախսումը հաշվառող հաշիվը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքը ոչ պակաս քան 60-70%- ով կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ` օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը և հաշվապահական բլանկները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 8 ժամ

Արդյունք 2. Արտադրության (մատուցվող ծառայությունների) ծախսումների բնութագրումը Կատարման չափանիշներ

ա. կարողանում է ներկայացնել ծախսումների հաշվառման ընդհանուր մեխանիզմը,

բ. փաստաթղթային ձևակերպումներով և գրանցամատյաններով ներկայացնում է ծախսումների հաշվապահական հաշվառման արդյունքները,

գ. հաշվարկում է թողարկված արտադրանքի (կատարված ծառայությունների) փաստացի ինքնարժեքը և ձևակերպել պատրաստի արտադրանքի պահեստ մուտքագրման համապատասխան փաստաթղթեր և հաշվային թղթակցություններ:

ե. կազմում է թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) ինքնարժեքի կալկուլյացիա:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվում է գործնական աշխատանքի հիման վրա, մասնավորապես տրված ծախսումներով պետք է 811«Հիմնական արտադրություն» հաշվում կուտակվեն թողարկված արտադրանքին վերագրվող ուղղակի և անուղղակի արտադրական ծախսումները, հաշվարկվի թողարկված պատրաստի արտադրանքի ինքնարժեքը և ձևակերպվի արտադրանքի մուտքը պահեստ, միաժամանակ կազմվեն ծախսումները հիմնավորող բոլոր սկզբնական փաստաթղթերը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե առաջադրանքը ոչ պակաս քան 60-70%- ով կատարվի ճիշտ:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանքներ` օգտագործելով ուսումնական ձեռնարկի նյութերը և հաշվապահական բլանկները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 10 ժամ

ՄՈԴՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆՏԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը SS<-4-09-013

Մոդուլի տևողությունը 36 ժամ

-տեսական պարապմունք 18 ժամ

-գործնական պարապմունք 18 ժամ

Մոդուլի նպատակը Սովորողի մոտ ձևավորել բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տնտեսագիտության տեսության վերաբերյալ:

Մուտքային պահանջները չկա

Արդյունքները

1.Տնտեսագիտության առարկան

2.Ապրանքափոխանակության հիմունքները

3. Սեփականության հիմնական հասկացությունները

4. Ազգային եկամուտ

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Տնտեսագիտության առարկան

Կատարման չափանիշներ

- ա. ներկայացնում է տնտեսագիտության առարկան,
- բ. բնութագրում է տնտեսագիտական հետազոտման մեթոդաբանությունը,
- գ. ներկայացնում է կազմակերպությունների տնտեսական գործունեության և երկրի էկոնոմիկայի վերլուծական կապը;

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ տնտեսագիտության տեսության առարկայի, նրա կողմից ուսումնասիրվող տնտեսական կատեգորիաների, ուսումնասիրման մեթոդի վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 60 տոկոսը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ` օգտագործելով «Տնտեսագիտության տեսության հիմունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 8 ժամ

Արդյունք 2. Ապրանքափոխանակության հիմունքները

Կատարման չափանիշներ

- ա. բացատրում է ապրանք, փող, արժեք հասկացությունները,
- բ. ներկայացնում է ապրանքափոխանակության զարգացման փուլերը(էվոլյուցիան):

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ ապրանք, փող, արժեք, ապրանքային արտադրություն, ապրանքափոխանակություն առաջարկ և պահանջարկ կատեգորիաների, դրանց զարգացման փուլերի վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 60 տոկոսը

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ` օգտագործելով «Տնտեսագիտության տեսության հիմունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 10

Արդյունք 3. Սեփականության հիմնական հասկացությունները

Կատարման չափանիշներ

- ա. ներկայացնում է սեփականության ձևերը,
- բ. բնութագրում է սեփականության իրավունքի հիմունքները, մասնավորապես ՀՀ-ում գործող կազմակերպությունների իրավականակերպչական ձևերը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ սեփականության ձևերի և դրանց վրա խարսխված ՀՀ-ում գործող կազմակերպությունների իրավականակերպչական ձևերի մասին:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 60 տոկոսը

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ` օգտագործելով «Տնտեսագիտության տեսության հիմունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը` 10

Արդյունք 4. Ազգային եկամուտ

Կատարման չափանիշներ

- ա. մեկնաբանում է ազգային եկամուտ և համախառն ներքին արդյունք հասկացությունները,
- բ. բնութագրում է տնտեսական աճը,
- գ. մեկնաբանում է ազգային հաշիվների էությունը և օգտագործման նպատակը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների և դրանց հաշվարկման մեխանիզմների մասին, մասնավորապես հարցադրումներ ազգային եկամտի, համախառն ներքին արդյունքի, անվանական և ռեալ համախառն ներքին արդյունքի որոշման մեթոդների հաշվարկման մասին:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 50 տոկոսը
Մեթոդաբանությունը և ռեսուրսները
Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ՝ օգտագործելով «Տնտեսագիտության տեսության հիմունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 8

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը ՖՀ-4-09-014

Մոդուլի տևողությունը 36 ժամ

-տեսական պարապմունք 16 ժամ

-գործնական պարապմունք 20 ժամ

Մոդուլի նպատակը Տրամադրել ուսանողին ֆինանսատնտեսական հարաբերությունների առաջնային գիտելիքներ, որպեսզի սովորողը գիտելիքներ ձեռք բերի ֆինանսական շուկաների, դրամավարկային քաղաքականության և հարկաբյուջետային ոլորտի վերաբերյալ:

Մուտքային պահանջները Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի մոդուլները:

Արդյունքները

1. ֆինանսատնտեսական հարաբերությունների բնութագրումը:
2. ֆինանսական շուկաների բնութագրումը
3. ՀՀ հարկաբյուջետային ոլորտի բնութագրումը:

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. ֆինանսատնտեսական հարաբերությունների բնութագրումը:

Կատարման չափանիշներ

ա. ուսանողը կարող է բնութագրել ֆինանսատնտեսական հարաբերությունները,

բ. Գիտի ֆինանսատնտեսական հարաբերությունների էվոլյուցիան,

գ. կարող է ներկայացնել ֆինանսների համակարգը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ ֆինանսատնտեսական հարաբերությունները բնութագրող հիմնական հասկացությունների և դրանց զարգացման վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 50 տոկոսը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ՝ օգտագործելով «Ֆինանսների հիմունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 2. ֆինանսական շուկաների բնութագրումը

Կատարման չափանիշներ

ա. ուսանողը կարող է բնորոշել ֆինանսական շուկայի կառուցվածքը,

բ. ներկայացնում է կապիտալի շուկան, վարկային շուկան, ապահովագրական շուկան, փողի շուկան,

գ. բնութագրում է ՀՀ-ում գործող ֆինանսավարկային համակարգը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ ֆինանսական շուկայի կառուցվածքի, այդ թվում կապիտալի, վարկային, ապահովագրական, փողի շուկա հասկացությունների, ՀՀ-ում գործող ֆինանսավարկային համակարգի վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում զետեղված հարցերի ոչ պակաս քան 50 տոկոսը

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ՝ օգտագործելով «Ֆինանսների հիմունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

Արդյունք 3. ՀՀ հարկաբյուջետային ոլորտի բնութագրումը:

Կատարման չափանիշներ

ա. ուսանողը կարող է ներկայացնել ՀՀ հարկային վարչարարության հիմունքները,

բ. կարող է բնութագրել ՀՀ բյուջետային համակարգը, տարբերակել ՀՀ պետական բյուջեն տեղական ինքնակառավարման կառույցների բյուջեից,

գ. կարող է ներկայացնել ՀՀ պետբյուջեի եկամուտների և ծախսային մասերի կառուցվածքը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ ՀՀ հարկային վարչարարության, պետական և տեղական բյուջեների եկամուտների ու ծախսերի ձևավորման առանձնահատկությունների մասին:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում գետեղված հարցերի ոչ պակաս քան 50 տոկոսը

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և սեմինար պարապմունքներ՝ օգտագործելով «Ֆինանսների հիմունքներ» ուսումնական ձեռնարկի նյութերը:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 12 ժամ

ՍՈՂՈՒԻ ԱՆՎԱՆՈՒՄ «ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Սողուլի դասիչը՝ ՀՕՀ -4 -09-015

Սողուլի տևողությունը՝ 36 ժամ

-տեսական պարապմունք 18 ժամ

-գործնական պարապմունք 18 ժամ

Սողուլի նպատակը՝ Տրամադրել ուսանողին ՀՀ հարկային օրենսդրության վերաբերյալ սկզբնական գիտելիքներ, որը հնարավորություն կտա ուսանողին մասնագիտական գործունեությունը իրականացնել օրենսդրական դաշտին համապատասխան:

Սուտքային պահանջներ Չկա

Արդյունքները

1. Հարկային օրենսդրության հիմունքներ և սկզբունքներ
2. «Շահութահարկի մասին» օրենք
3. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանում:
4. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանում:
5. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանում
6. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ»

գնահատման կարգը Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Արդյունք 1. Հարկային օրենսդրության հիմունքներ և սկզբունքներ

Կատարման չափանիշներ

ա. Սահմանում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանվող Հայաստանի Հանրապետությունում հարկ, հարկային գործակալ հասկացությունները,

բ. ներկայացնում է հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները, հարկային վեճերի լուծման կարգը, ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական պահանջների խախտումների համար պատասխանատվությունը,

գ. ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի հիմքում դրված սկզբունքների էությունը՝ հարկի վճարման կամովիության սկզբունք, հարկադրանքի սկզբունք, հարկային համակարգի կանխատեսելիության սկզբունք, արդարության սկզբունք

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է թեստի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է հարցադրումներ ՀՀ հարկային օրենսդրությամբ, մասնավորապես «Հարկերի մասին օրենքով» սահմանված հիմնական հասկացությունների, հարկ վճարողների իրավունքների և պարտականությունների, հարկային վարչարարության և այլ հիմնական հարցերի վերաբերյալ: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը պատասխանի թեստում գետեղված հարցերի ոչ պակաս քան 50 տոկոսը

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանք՝ «Հարկային օրենսդրության հիմունքներ» ուսումնական ձեռնարկի հիման վրա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 4 ժամ

Արդյունք 2. «Շահութահարկի մասին» օրենք

Կատարման չափանիշներ

- ա. սահմանում է շահութահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները,
- բ. կարող է ներկայացնել հարկվող շահույթի հասկացությունը,
- գ. կարող է կիրառել նվազեցումները և դրույքաչափերը,
- դ. կարող է ներկայացնել շահութահարկի հաշվարկը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիմնան վրա, մասնավորապես հաշվետու ժամանակաշրջանում կատարված կազմակերպության եկամուտների և նվազեցվող ծախսերի հիման վրա պետք է որոշի հարկվող շահույթի գումարը, հաշվարկի շահութահարկը և այդ տվյալներով լրացնի «Շահութահարկի հաշվարկ» ձևը: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում ճիշտ կատարի հաշվարկը և լրացնի տրված ձևաթերթը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանք՝ «Հարկային օրենսդրության հիմունքներ»

ոսումնական ձեռնարկի հիման վրա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 8 ժամ

Արդյունք 3. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանում:

Կատարման չափանիշներ

- ա. սահմանում է եկամտահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները,
- բ. կարող է որոշել հարկվող եկամուտը,
- գ. կարող է կիրառել նվազեցումները և դրույքաչափերը,
- դ. կարող է ներկայացնել եկամտահարկի հաշվարկը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիմնան վրա, մասնավորապես հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված հարկվող եկամուտների և նվազեցվող ծախսերի հիման վրա պետք է որոշի հարկվող եկամտի գումարը և էլնելով եկամտահարկի հաշվարկման օրենքով նախատեսված դրույքաչափերից հաշվարկի եկամտահարկի գումարը և այդ տվյալներով լրացնի «Եկամտահարկի հաշվարկ» ձևը: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում ճիշտ կատարի հաշվարկը և լրացնի տրված ձևաթերթը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանք՝ «Հարկային օրենսդրության հիմունքներ»

ոսումնական ձեռնարկի հիման վրա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 6 ժամ

Արդյունք 4. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանում:

Կատարման չափանիշներ

- ա. Սահմանում է ԱԱՀ վճարողներին, հարկվող, չհարկվող և հարկից ազատված գործարքները,
- բ. կարող է որոշել հարկվող շրջանառությունը,
- գ. կարող է կիրառել դրույքաչափերը,
- դ. կարող է իրականացնել հարկի հաշվեգրումը և հաշվանցումը,
- ե. կարող է ներկայացնել ԱԱՀ հաշվարկը:

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիմնան վրա, որն իր մեջ ներառելու է գործառնություններ հարկվող շրջանառությունը որոշելու, ԱԱՀ-ի գծով պարտավորությունը հաշվեգրելու, մատակարարին վճարված ԱԱՀ-ի գումարը հաշվանցելու և «ԱԱՀ-ի հաշվարկ» ձևը կազմելու վերաբերյալ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում ճիշտ կատարի հաշվարկը և լրացնի տրված ձևաթերթը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանք՝ «Հարկային օրենսդրության հիմունքներ»

ոսումնական ձեռնարկի հիման վրա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 6 ժամ

Արդյունք 5. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանում

Կատարման չափանիշներ

- ա. գիտի հարկվող ապրանքները և հիմնական դրույքաչափերը,
- բ. գիտի ակցիզային հարկով հարկման մեխանիզմը

գ. կարող է կատարել հարկի գծով պարտավորությունների հաշվարկ

Գնահատման միջոցը

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա, որն իր մեջ ներառելու է գործառնություններ ակցիզային հարկով հարկվող շրջանառությունը որոշելու, ակցիզային հարկի գծով պարտավորությունը հաշվեգրելու և «Ակցիզային հարկի հաշվարկ» ձևը կազմելու համար:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում ճիշտ կատարի հաշվարկը և լրացնի տրված ձևաթերթը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանք՝ «Հարկային օրենսդրության հիմունքներ»

ոսումնական ձեռնարկի հիման վրա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 6 ժամ

Արդյունք 6. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ»

Կատարման չափանիշներ

ա. սահմանում է սոցիալական վճարներ կատարողներին և սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտները,

բ. գիտի կիրառել դրույքաչափերը,

գ. կարող է ներկայացնել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկը,

դ. կարող է ներկայացնել անհատ ձեռնարակտիրության մասով սոցիալական վճարների

հաշվարկման առանձնահատկությունները:

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքի հիման վրա, որն իր մեջ ներառելու է գործառնություններ ֆիզիկական անձինց պահվող և գործատուի կողմից հատկացվող պարտադիր սոցիալական ապահովագրության գումարների հաշվարկման և հաշվարկի ձևը լրացնելու համար:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի, եթե ուսանողը հիմնականում ճիշտ կատարի հաշվարկը և լրացնի տրված ձևաթերթը:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները

Դասախոսություններ և գործնական աշխատանք՝ «Հարկային օրենսդրության հիմունքներ»

ոսումնական ձեռնարկի հիման վրա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝ 6 ժամ